ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ԱՆՎԱՆ N12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«Պատանի գեղարվեստի ամրոց»

Խմբակի ծրագիր

2023-2024 ուստարի

Կերպարվեստի ուսուցչուհի՝

Ադիլյան Լիլիթ

/շաբաթական՝2ժ. տարրական խումբ

2ժ. միջին խումբ

Տարեկան 136 ժամ/

«Պատանի գեղարվեստի ամրոց»

Խմբակի ծրագիր

Գունանկար (20 ժամ)
Նպատակը
Պատկերվող առարկաների գունային կառուցվածքի,ձևի, ծավալի հեռանկարչական կրճատումների,լուսաստվերների,երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողությունների զգացում:
Խնդիրներ
Ընկալել պատկերվող օբյեկտների ձևը,կառուցվածքը, ծավալը, գույնը, ֆակտուրան, լուսաստվերը, տարածական դիրքը և փոխհարաբերությունները և հեռանկարչական կրճատումները:
Վերջնարդյունքներ
Ներկայացնել գույնի միջոցով առարկաների տարածական պատկերման հիմունքները (հեռանկար, հեռավորության վրա օբյեկտների փոքրացում, կրճատում, հորիզոնի գիծ)
Բովանդակություն
1.Նատյումորտ: 2.Բնանկար: 3.Դիմանկար:

Գծանկար (20 ժամ)
Նպատակը
Ապահովել համապատասխան միաջավայր իրատեսական, վերացական և երևակայական աշխատանքներ ստեղծելու համար: *Համաչափության կանոնների վերարտադրման կարողությունների ձևավորում* *Առարկաները զննելու, չափելու և պատկերելու կարողության ձևավորում*
Խնդիրներ
Կոմպոզիցիոն կենտրոնի ընդգծում, լույսի և ստվերի միջոցով գլխավոր հակադրումը երկրորդականին: *Գծանկարում կիրառվող նյութերի և միջոցների փորձարկում:* *Ճեպանկարների կատարում:*
Վերջնարդյունքներ
Ներկաըացնել գծի միջոցով առարկաների տարածական պատկերման հիմունքները (հեռանկար, հեռավարության վրա օբյեկտների փոքրացում, կրճատում, հորիզոնի գիծ):
Բովանդակություն
1. Նատյուրմորտ 2. Բնանկար 3. Դիմանկար 4. Ճեպանկար 5. Էսքիզ 6. Ինքնանկար

Գոբելեն (10 ժամ)
Նպատակը
Ձևավորել՝ – *Գիտելիքներ Հայաստանում գոբելենագործության առանձնահատկությունների վերաբերյալ:* – *Զարդանախշերի կամ ընտրված դետալների ճիշտ օգտագործման, կառուցման, տեղադրման կարողություններ;* – *Գոբելեն գործելու կարողություններ և հմտություններ:* – *Ինքուրույն ստեղծագործելու կարողությունների զարգացում:*
Խնդիրներ
Գոբելենի՝ որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղի վերաբերյալ տեսական գիտելիքների ձեռքբերում: *Էսքիզների գծագրում, գույների ճիշտ համադրում:* *Աշխատանքների թերությունների բացահայտում և վերացում:* *Վերջնամշակման և հարդարման աշխատանքների կատարում:*
Վերջնարդյունքներ
• *Ներկայացնել Հայաստանում գոբելենագործության առանձնահատկությունները:* • *Կատարել էսքիզներ:* • *Օգտագործել կառուցել և տեղադրել ըստ էսքիզի ընտրված դետալներն ու զարդանախշերը:* • *Ներկայացնել ավարտում աշխատանք:*
Բովանդակություն
1. Գոբելեն, պատմական ակնարկ: Գոբելենի ստեղծման առանձնահատկությունները Հայաստանում: 2. Էսքիզների կատարում: Հիմնական կոմպոզիցիայի ընտրություն 3. Աշխատանք ըստ սեփական էսքիզի:

Կոմպոզիցիա (20 ժամ)
Նպատակը
Կոմպոզիցիայի հիմնական միջոցների և հնարքների, գեղարվեստական ոճաձևերի ստեղծագործաբար կիրառման կարողությունների ձևավորում: *Կոմպոզիցիայի տարրերի համաձայնեցվածության, կոմպոզիցիոն կենտրոնի շեշտադրման ուսուցում:*
Խնդիրներ
«Կոմպոզիցիա» հասկացության լայն ըմբռնումը, որպես ստեղծագործության, թեմայի գեղարվեստական նյութի, ձևի և կատարման տեխնիկական հնարքների ամբողջություն: *Կոմպոզիցիոն աշխատանքների կատարում, թեմատիկ աշխատանքների շարքի ընտրություն, կատարում և ցուցադրություն:* *Գաղափարի դուրս բերում, կենտրոնի ընդգծում լույսի և գույնի միջոցով, գլխավոր հակադրումը երկրորդականին:*
Վերջնարդյունքներ
Տարբերի նյութերի մշակման և դրանցով աշխատելու հնարքները: *Սեփական աշխատանքում կիրառել պատկերման տարբեր տեխնիկաներ և հնարներ:* *Ներկայացնել հիմնական գաղափարը:* *Տարբեր գեղարվեստական հնարքների միջոցով ընդգծել ասելիքը:*
Բովանդակություն
1. Ժանրային պատկերներ: 2. Հեքիաթի ձևավորում: 3. Դեկորատիվ նկարչություն:

Հագուստի մոդելավորում (16 ժամ)
Նպատակը
Ծանոթացնել հագուստի մոդելավորման պատմությանը: *Տարբեր ոճերի հագուստների մոդելավորում:*
Խնդիրներ
Կիմանա հագուստի մասին, կտարբերի ոճերը և կստեղծի սեփական հագուստները:
Վերջնարդյունքներ
Կիմանա նորաձևության ոճերն ու ուղղությունները: *Մոդելավորման գործընթացը:* *Կնկարեն և կստեղծեն սեփական հագուստների կալեկցիան:*
Բովանդակություն
1.Հայկական նորաձև տարազ 2.Ստեղծել տարբեր ոճի հագուստներ: 3. Ծանոթանալ այլերկրների նորաձևության հետ և ստեղծել սեփականը:

Բատիկա (20 ժամ)
Նպատակը
Սովորողներին ծանոթացնել բատիկայի ծագման և հետագա զարգացման պատմությանը: Ծանոթացնել նյութերին և կիրառմանը, տեխնիկային:
Խնդիրներ
Բատիկան՝ որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների ձեռքբերում: *Էսքիզների գծագրում, գույների ճիշտ համադրում:* *Վերջնամշակման և հարդարման աշխատանքների կատարում:* *Ստեղծագործական աշխատանքի կատարում՝ պահպանելով անվտանգության կանոնները:*
Վերջնարդյունքներ
Սովորողը կկարողանա տարբերել բատիկա նյութերի մշակման և դրանցով աշխատելու հնարքները: *Սեփական աշխատանքում կկարողանա ներկայացնել իր մտքերն ու գաղափարները:*
Բովանդակություն
1. Հեքիաթի ձևավորում 2.Զարդարվեստ 3.Դեկորատիվ նկարչություն

Պլեներ (Էտյուդ) (20 ժամ)
Նպատակը
Բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակում: *Գույնի, երանգի, ռիթմի և ձևի հատկությունների օգնությամբ տրամադրություն և իրավիճակի արտահայտման կարողությունների ձևավորում:*
Խնդիրներ
Պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարչկան կրճատումների, լուսաստվերի, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման աշխատանքներ:
Վերջնարդյունքներ
Կատարված դիտումների և ուսումնասիրությունների հիման վրա, բնօրինակից կամ հիշողությամբ պատկերել բնության տեսարաններ:
Բովանդակություն
1. Բնության տեսարաններ: 2. Քաղաքային և գյուղական տեսարաններ: 3. Կարճատև էտյուդներ (պլեներ)՝ միայն գծով կամ միայն գույնով:

Գրաֆիկական դիզայն (10 ժամ)
Նպատակը
Ստեղծել իրատեսական, վերացական և երևակայական 2D, 3D աշխատանքներ: *Կերպարվեստի ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու, քննարկելու և դատողություններ անելու հմտությունների ձևավորում:*
Խնդիրներ
Գրաֆիկական դիզայնը՝ որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղի վերաբերյալ տեսական գիտելիքի ձեռքբերում:
Վերջնարդյունքներ
Սովորողը կկարողանա ստանալ ծավալային պատկերներ, կարտահայտի իր մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D, 3D աշխատանքներ, եզրագծերով, տոներով և գունային երանգներով: *Բնօրինակից կկարողանա ստանալ վերացական պատկերներ:* *Կկարողանա ստեղծել երևակայական, հարթ և ծավալային պատկերներ:*
Բովանդակություն
Ստեղծագործական աշխատանքի համար կիրառվող գործիքների և նյութերի ընտրություն: Մասնագիտական բառարան: Նյութերի և միջոցների խնայողություն: